Հայ միջնադարյան գրականություն

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

(951 -1003)

Գրիգոր Նարեկացու գրական ասպարեզ իջնելուց առաջ առկա էր արդեն կեսհազարամյա ուղի անցած բազմահարուստ հայ մատենագրություն: Այսինքն՝ կային հանճարեղ բանաստեղծի ծնունդին նպաստող կայուն գրական հիմքեր:

Առկա էին նաև այդ ծնունդի համար անհրաժեշտ պատմական պայմաններ: Նկատի ունենք Բագրատունյաց կենտրոնական թագավորության ազգանպաստ գործունեության շնորհիվ Հայաստանի տնտեսական ու կրթական-մշակութային կյանքի ծաղկումը:

Պետական խնամածությամբ կառուցված ու վերակառուցված վանքերում ազգային դարավոր ավանդույթների վերակենդանացմամբ ու զարգացմամբ

ծավալվեցին հայ դպրությունն ու մատենագրությունը, գիտությունը, գրչությունն ու մանրանկարչությունը:

Այս պատմական ժամանակաշրջանում ու միջավայրում, ահա, կայացավ Գրիգոր Նարեկացու աննախօրինակ բանաստեղծական անհատականությունը:

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Շատ քիչ բան է հայտնի Գրիգոր Նարեկացու կենսագրությունից: Ծնվել է 951 թվականին Վասպուրական նահանգի Ռշտունիք գավառում: Կյանքի մեծ մասն անցկացրել է Վանա լճի հարավային ափին գտնվող Նարեկավանքում, ուստի կոչվել է Նարեկացի:

Հայրը Անձևացյաց գավառի եպիսկոպոս Խոսրով Անձևացին էր, որը ժամանակի ուսյալ հոգևորականներից և մատենագիրներից էր: Նա երաժշտական-բանաստեղծական արվեստի գիտակ էր և որոշիչ դեր է կատարել ապագա բանաստեղծի մտքի և ստեղծագործական կյանքի կազմավորման գործում:

Գրիգորը ուսանել է Նարեկավանքի դպրոցում, որը հիմնել էր Անանիա Նարեկացին: Վերջինս նրա մորեղբայրն էր և նույնպես՝ ժամանակի նշանավոր գիտնական-մատենագիրներից մեկը: Որպես հմուտ մանկավարժ՝ մեծ տեղ է հատկացրել գրականությանն ու երգեցողությանը՝ նպաստելով իր սանի բանաստեղծական տաղանդի ձևավորմանը:

Նարեկավանքի դպրոցում Գրիգորն ուսանել է իր ավագ եղբոր ՝ Հովհաննեսի հետ, որը ժամանակին հայտնի է եղել իր կրթական-եկեղեցական գործերով: Եղել է նաև կրտսեր եղբոր խորհրդատուն:

Կրթություն ստանալուց հետո Գրիգորը նույն վանքում դարձել է վանական, ստացել վարդապետի աստիճան և զբաղվել մանկավարժությամբ ու գրական աշխատանքներով: Ապրել է սրբակենցաղ ճգնավորի վարքով, հոգևոր ու մտավոր տքնությամբ կատարելագործել միտքն ու հոգին: Ըստ ավանդության՝ նա ճգնել է մի քարայրում, որը հետագայում կոչվել է իր անունով:

Իր հոր և ուսուցչի նման, Գրիգոր Նարեկացին ևս, որպես լուսավոր անհատ, հոգևոր դասի բարձր շրջաններից հալածվել է, անգամ ամբաստանվել թոնդրակյան աղանդին հարելու համար: Բանաստեղծի հայրն այդ մեղադրանքով պաշտոնանկ էր եղել, իսկ ուսուցիչը ստիպված էր եղել գրել իր անմեղությունն ապացուցող գործեր: Գրիգոր Նարեկացին ևս գրել է մի թուղթ-ուղերձ, որտեղ դատապարտել է թոնդրակեցիներին:

Պահպանվել է միջնադարյան մի ավանդազրույց, ըստ որի՝ իշխաններն ու եպիսկոպոսները սուտ մեղադրանք են հարուցել Գրիգոր Նարեկացու դեմ և ցանկացել են դատել նրան: Հրավիրակներ են ուղարկում՝ նրան դատարան բերելու: Նարեկացին խոնարհությամբ ընդունում է եկվորներին և ճանապարհ ընկնելուց առաջ նրանց մատուցում է երկու խորոված աղավնի: Հրավիրակները հիշեցնում են, որ պաս է, միս ուտել չի կարելի: Նարեկացին ներողություն է խնդրում, որ մոռացել է պասը և առաջարկում է հյուրերին՝ հրաման տալ, որպեսզի աղավնիները թռչեն: Հրավիրակներն անկարող էին այդ անել: Այդ ժամանակ Նարեկացին ինքը հրամայում է, և աղավնիները կենդանանալով՝ թռչում են: Եկվորները, տեսնելով այդ սուրբ մարդու հրաշագործությունը, գնում, պատմում են իրենց աչքով տեսածը. մեղադրանքը վերացվում է:

Նարեկացու սրբակենցաղ վարքի ու հրաշագործությունների մասին տարածվել են նաև այլ զրույցներ, հյուսվել են ժողովրդական երգեր...

Գրիգոր Նարեկացին վախճանվել է 1003 թվականին և թաղվել է Նարեկավանքում (հիմնովին ավերված 1915-ին): Այստեղ, մի գմբեթազարդ մատուռդամբարանում ամփոփվել է մեծ բանաստեղծի աճյունը: Դարեր շարունակ այդ գերեզմանը եղել է սրբազան ուխտատեղի:

ՄԵԾԵՐԸ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՄԱՍԻՆ

Հայ հանճարը կարողացել է խոսել մարդկային սրտի ամենանվիրական ու ամենաքնքուշ զգացմունքների հետ և կարողացել է հասնել մինչև Նարեկացին, որ ապաշխարողի կերպարանքով իր գլուխը բարձրացրել է մինչև երկինք ու զրույց է արել Աստծո հետ երես առ երես:

Այստեղ հայի լեզուն չի, որ խոսում է, բերանը չի, որ պատմում է, կրակված սիրտն է, որ այրվում է երկիրը բռնած, փանջված հոգին է, որ մռնչում է մինչև երկինք:

Հովհաննես Թումանյան

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԸ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՄԱՍԻՆ

***

Գրականության պատմությունը նման է լեռնապարի, որքան հեռանում ենք այս ու այն բլուրից կամ սարից, նույնքան փոքրանում են դրանք: Նա նման չէ նույնիսկ՝ Արարատին, որ հեռավորության ու միջոցի մեջ նույնպես փոքրանում է:

...Նա նման է...հորիզոնի, որքան հեռանում ես իրենից, նույնքան մոտենում է ինքը, և ինչքան մոտենում ես իրեն, այնքան հեռանում է նա՝ մնալով միշտ անհաս և անմատույց, երբեք չփոքրացող և միշտ բացարձակվող:

***

Նարեկացին՝ բանաստեղծական չափազանցությունների ինքնիշխան տերն ու լիազոր տնօրենը, օժտված է մի հոգով, որ նման է գոգավոր հայելու. ոսպնյակը հավաքում է ամենահեռավոր և միմյանցից զատված ճառագայթները և միացնելով կենտրոնացնում մեկ կիզակետում: Այսպես է, որ ծովի ջրերը փոխվում են թանաքի, բազմասպարեզ ընդարձակությամբ դաշտերը՝ թղթի, անտառները՝ գրիչների, և սակայն դարձյալ չեն կարողանում գրանցել բանաստեղծի ողջ ասելիքը...

***

Միայն իր մի քանի տաղով Նարեկացին կդառնար մեր առաջին մեծ բանաստեղծը: Բայց նա կերտեց նաև իր «Մատյանը», որ մեր բանաստեղծության Աղթամարա վանքն է՝ լոկ այն զանազանությամբ, որ «Մատյանն» անկործանելի է ստուգապես:

***

Նարեկացու տաղերգությունը շարականների շարունակություն է՝ ըստ ժամանակի, բայց դրանց ժխտումն է՝ ըստ էության: Շարականների կաղապարվածության դիմաց

Նարեկացին դրեց իր անկաշկանդությունը, նրանց խորհրդանիշների դեմ՝ իր կենդանի պատկերները, նրանց բնազրկության տեղ՝ իր բնապաշտությունը, նրանց արարողական առկախության փոխարեն՝ իր բանաստեղծական անկախությունը:

***

Լինելով մեր հին գրականության ամենից շատ հրատարակված և հայ ժողովրդի մեջ ամենատարածված գիրքը, իր բազմաթիվ վերնագիր-անվանումների փոխարեն կոչվելով պարզապես «Նարեկ»՝ բանաստեղծության այս արտակարգ և անզուգաբախտ հատորը ոչ այնքան ընթերցվել է, որքան համբուրվել, դրվել ոչ այնքան դարակի կամ գրակալի, որքան հիվանդի ճակատի վրա կամ բարձի տակ, ոչ այնքան հասկացվել, որքան զգացվել, ոչ այնքան գնահատվել, որքան պաշտվել:

***

Նորարար էր ամեն բանով. և՛ լեզվով, որ լինելով ամենաբարդ գրաբարը՝ միաժամանակ խառնում էր աշխարհաբարի մտածողություն, և՛ ձևով, որ առաջին անգամ իր մեջ էր առնում չափն ու կշռույթը, հանգն ու հանգգիտությունը, և՛ օգտագործմամբ ժողովրդական բանահյուսության, այն «լալեաց բանաստեղծութեան», որ պաշտոնական գաղափարախոսությունը համարում էր ոճրագործություն և անառակություն:

***

Նա մեր առաջին մարդագիրն է և մեծագույն մարդերգուն:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Հայտնի են Գրիգոր Նարեկացու հեղինակած մի շարք արձակ գործեր: Դրանցից առաջինը Աստվածաշնչի ամենասիրված գրքերից մեկի՝ «Երգ երգոցի» մեկնությունն է (բացատրությունը)՝ գրված 977 թվականին: Նարեկացին գրել է նաև «Ապարանքի խաչի պատմություն» վերնագրով գովերգական-պատմողական բնույթի մի երկ: Այստեղ նկարագրված է 983 թվականին Քրիստոսի խաչի մի մասունքի հանդիսավոր տեղակայումը Մոկաց աշխարհի Ապարանք գյուղին մերձ Սուրբ Խաչ վանքում: Այդ հանդիսությանը ներկա է եղել նաև ինքը՝ Նարեկացին: Խաչի մասունքը Բյուզանդիայի Վասիլ կայսրից նվեր էր ստացել վանքի առաջնորդ Ստեփանոս Ապարանեցին, որը և պատվիրել է Նարեկացուն գրել այդ պատմությունը: Կատարելով պատվերը՝ հեղինակն այդ գործին կից գրել է նաև Սուրբ Խաչին և Սուրբ Կույսին նվիրված ներբողյաններ: Թե՛ Պատմությունը,

թե՛ ներբողյանները գեղարվեստական արձակի փայլուն նմուշներ են: Նարեկացու անունով հայտնի են նաև այդ կարգի որոշ այլ գործեր...

Առավել մեծ արժեք են ներկայացնում Նարեկացու բանաստեղծական երկերը: Մինչև նրա ի հայտ գալը, հայ քերթության մեջ գերիշխում էր միայն մեկ ժանր՝ օրհներգ-շարականը: Ասպարեզ իջած հանճարի համար նեղ էին շարականի սահմանները: Ուստիև նա արտահայտվեց կաղապարներից առավել ազատ, իր իսկ հիմնած բանաստեղծական նոր ժանրերով՝ բանք, գանձ, տաղ:

Բանքը երաժշտությունից և պարտադիր ձևերից ազատ բանաստեղծական խոսք է: Հիմնականում ողբական-աղոթական բնույթի բանք է Նարեկացու «Մատյան ողբերգության» երկը՝ բաղկացած բան-գլուխներից: Դրանք բանաստեղծական աղոթքներ են՝ հիմնականում հորինված ազատ ոտանավորով:

Գանձը երաժշտաբանաստեղծական տեսակ է, ունի ուրույն կառուցվածք և վիպական-պատմողական բնույթ: Այն, ինչպես շարականը, նվիրված է եկեղեցական որևէ տոնի կամ սրբի հիշատակի, սակայն դուրս է պաշտոնական արարողությունից:

Տաղը գանձի հետ շաղկապված երգ է՝ նույնպես ձոնված որևէ եկեղեցական տոնի կամ սրբի հիշատակի: Այն զերծ է կաղապարներից, հյուսված է թե՛ կանոնավոր և թե՛ ազատ չափով և ավելի մոտ է ժամանակակից բանաստեղծությանը: Նարեկացին գանձերի և տաղերի համակցությամբ ստեղծել է իր «Գանձարան» ժողովածուն: Պահպանվել են նրա հեղինակած 16 գանձեր և ավելի քան երկու տասնյակ տաղեր (կոչված են նաև մեղեդիներ):

ՏԱՂԵՐԸ

Գրիգոր Նարեկացին միստիկ բանաստեղծ է: Առանց իմանալու, թե ինչ է դա, հնարավոր չէ հասկանալ ո՛չ բանաստեղծի բնության երգերը, ո՛չ էլ ողբերգը:

Միստիկի գերագույն նպատակն է հասնել և ձուլվել աստվածային էությանը: Աստված կատարյալ է, մարդը՝ անկատար: Աստծուն հասնելու համար մարդը պիտի հավատով, հույսով ու սիրով լցված՝ կատարելագործվի, մաքրվի մեղքերից, մարմնի ցանկություններից: Միստիկը Աստծուն գտնում է ամենուրեք, արտաքին աշխարհում և իր հոգու մեջ, քանի որ, նրա համոզմամբ, կատարյալ Աստվածը ճառագայթված է անկատար աշխարհի՝ բնության և մարդու մեջ:

Միստիկ Նարեկացին ևս համոզված է, որ Աստված ներկա է «աշխարհի նյութեղեն բոլոր տարրերում, բոլոր ծագերում»: Հետևաբար, բնությունն անդրադարձնում է Աստծո լույսն ու գեղեցկությունը: Եվ ձգտել այդ լույսին ու

գեղեցկությանը՝ նշանակում է մոտենալ Աստծուն: Եվ գովերգել բնության լույսն ու գեղեցկությունը՝ նշանակում է գովերգել Աստծուն:

Ահա, միստիկական այս սկզբունքից ելնելով, Գրիգոր Նարեկացին, հատկապես տաղերում, առաջին անգամ հայ բանաստեղծության մեջ պատկերել ու գովերգել է բնությունը՝ ձգտելով բացահայտել արտաքին աշխարհում արտացոլված աստվածային լույսն ու գեղեցկությունը: Այդպիսով Նարեկացին ստեղծել է բնության այլաբանական երգեր:

Տաղերից մեկը բանաստեղծը նվիրել է Քրիստոսի ծնունդին և մկրտությանը: Այս առիթով նա բացում է մեր դեմ ծաղկափթիթ բնության մի կենդանի ու գունագեղ տեսարան: Այստեղ ծառերն ու ծաղիկները խիտ բողբոջներով են ու խիտ սաղարթներով, գեղեցիկ գույն ունեն, պտղավետ են, ակնահաճո, քաղցրահամ: Խուռն խմբված և փարթամորեն զարդարված վարդի ճառագայթները զվարթացնող բույր ունեն, տարածում են ոսկեճաճանչ, տերևախիտ ու կանաչ թերթեր... Ճառագայթող վարդն այստեղ խորհրդանշում է Քրիստոսին, իսկ փթթող ծառերն ու ծաղիկները նրա հետևորդ առաքյալներն ու աշակերտներն են: Այս խորհրդաբանությունը, սակայն, չի խանգարում տաղն ընկալել իբրև շքեղ բնության երգ:

Դեռևս հեթանոսական շրջանում մեր ժողովուրդը ցնծագին ծիսակատարությամբ պաշտել է ջուրը՝ իբրև մաքրագործող հրաշագործ ուժ: Ժառանգելով հեթանոսական այդ արարողությունը՝ Ջրօրհնեքը, քրիստոնեական Եկեղեցին այն ձոնել է Հորդանան գետի ջրերում Հիսուսի մկրտության հիշատակին: Ահա թե ինչու Գրիգոր Նարեկացին օրհներգում է ջուրը, որ սրբացած է աստվածային էությամբ: Նա պատկերում է հորդ աղբյուրները, վտակների խմբերը՝ ծավալվող ծիծաղով, կարկաչահոս, ոլորապտույտ ալիքներով, որոնք օղակվում են մանրաշաղ, մանրածավալ ավազի վրա, հորդելով խորքերից՝ ելևէջում են ու վետվետում...

Հեթանոս հայերը մեծ շուքով տոնել են նաև Վարդավառը, որը նույնպես կապված է եղել ջրի պաշտամունքի հետ: Այդ տոնը նվիրվել է Աստղիկ դիցուհուն, որին ընծայվել են ծաղիկներ, հատկապես վարդեր: Հայ եկեղեցին այդ տոնը ևս յուրացրել է և նվիրել Քրիստոսի պայծառակերպությանը: Ըստ Ավետարանի՝ Աստծո որդին Թաբոր լեռան վրա հայտնվում է արևի պես պայծառ դեմքով և փայլուն ճերմակ զգեստներով: Այս անգամ ևս, ինչպես Հորդանանի ջրերում, բացահայտվում է նրա աստվածային էությունը:

Նարեկացին, միաձուլելով հեթանոսականն ու քրիստոնեականը, ստեղծել է մեկ այլ հրաշալի այլաբանական երգ՝ «Վարդավառի տաղը»: Այստեղ Քրիստոսին տեսնում ենք դարձյալ պայծառ (գոհար) վարդի, նաև ծովային ծաղկի,

շողշողուն պտղի ու ճերմակ շուշանի խորհրդանշական պատկերով: Ահա տաղի առաջին հատվածը.

Գոհար վարդըն վառ առեալ
ի վեհից վարսիցն արփենից.
ի վեր ի վերայ վարսից
ծաւալէր ծաղիկ ծովային.
ի համատարած ծովէն
պըղպըջէր գոյնըն այն ծաղկին.
երփին երփնունակ ծաղկին.
շողշողէր պըտուղն ի ճըղին:

(Գոհարափայլ վարդն էր իր վառ շողերը ստացել արեգակի վեհ վարսերից, վերը՝ վարսերի վրա ծավալվում էր ծաղիկը ծովային. համատարած ծովից ցոլցլում էր գույնն այդ ծաղկի, գունեղ, երփներանգ ծաղկի, շողշողում էր պտուղը ճյուղին):

Այս գեղեցիկ հատվածի բուն իմաստն այն է, որ Աստվածորդին իր պայծառությունը ստանում է Հայր Աստծո լույսից և ծավալվելով ու հասունանալով որպես շողշողուն պտուղ՝ տարածում է իր լույսն ու հոգևոր բարիքները: Այդ պտուղը սնող տերևն էլ, ինչպես ասված է շարունակության մեջ, Աստծո խորհրդանշական տավիղն է՝ Նրա կենարար ձայնը: Շարունակելով այլաբանությունը, բանաստեղծը պատկերում է, թե ինչպես գոհարափայլ վարդ-Քրիստոսի լույսից կյանք ու կենդանություն է առնում ողջ բնությունը՝ երկրային աշխարհը:

Ավելի լավ հասկանալու համար՝ շարունակությունը կարդանք աշխարհաբար, թեև գրաբարից աշխարհաբարի վերածելով՝ տաղը որոշ չափով կորցնում է իր հմայքը.

Վարդի խուռներամ փնջից
գույնզգույն ծաղկունք ծաղկեցին,
այդ բարձր ու ամուր ծառերը
վարդագույն ոստեր նետեցին.
այդ դալար ու բողբոջած ճյուղը
զարդ առավ վարդ ու շուշանի.
շուշանն էր շողում հովտում,
շողշողում դեմն արեգակի...

Այստեղ ևս բարձր ու ամուր ծառերը, դալար ու բողբոջած ճյուղը, ծաղկունքն ու աստղունքը խորհրդանշում են Քրիստոսի պայծառությամբ համակվածներին: Որոշակի է, ուրեմն, կրոնական այլաբանությունը, բայց այս անգամ ևս բանաստեղծը բնության այնպիսի խոր զգացողությամբ ու սիրով է գծագրել պատկերները, ողողել ջերմ լույսով ու վառ գույներով, որ ստեղծվել է մի շատ տպավորիչ բնանկար, բնության երգ:

Այսպիսով՝ Գրիգոր Նարեկացու տաղերում բնության խորհրդանշական, այլաբանական պատկերումը մերձենում է կենդանի բնության երգին:

Աստվածային էությունն իր մեջ կրում է նաև մարդը՝ որպես բնության մասնիկ և Արարչի առավել բարդ ու հրաշակերտ արարած՝ օժտված բանականությամբ և աստվածային պատկերով: Այդպիսին են հատկապես մաքրակենցաղ մարդիկ, սրբերը և հատկապես՝ Մարիամ Աստվածածինը: Նա օժտված է աստվածության հատկանիշներով և աշխարհ է բերել մարդկային կերպարանք առած Աստվածորդուն: Այս է պատճառը, որ քնարերգության մեջ և, առհասարակ, արվեստում ամենից ավելի պատկերվել ու գովերգվել է Աստվածամայրը: Նրան ջերմորեն օրհներգել է նաև Գրիգոր Նարեկացին իր մի շարք գործերում, հատկապես «Աչքն ծով՝ ի ծով ծիծաղախիտ» տաղում, որ հայտնի է նաև «Մեղեդի ծննդյան» վերնագրով:

Շարականներում Աստվածածինը գովերգվել էր վերացականորեն, մինչդեռ Նարեկացու տաղում նա պատկերված է երկրային, տեսանելի մարդու բոլոր հատկանիշներով: Ինչպես բնությունը, այնպես էլ մարդը մեծ բանաստեղծի տաղերում արտացոլված է իր ողջ հմայքով ու կենդանությամբ: Նրա պատկերած Աստվածածինը կրում է երկնային լույսը, գեղեցկությունը և մաքրությունը, բայց հանդես է բերված իբրև իրական, չքնաղ ու հմայիչ կին:

Նարեկացին մանրամասն նկարագրում է այդ գեղեցիկ կնոջ արտաքինը և արդուզարդը: Եվ դա ոչ թե սառն ու անշունչ քանդակ է կամ սրբապատկեր, այլ կենդանի, շարժուն, թրթռուն արարած: Նրա ծով աչքերը ծիծաղախիտ ծովում ծավալվում էին այգաբացին՝ երկու փայլակնաձև արեգակի նման. շողն էր իջնում լույս առավոտվա ժամին: Ահա այդ պատկերը Նարեկացու լեզվով.

Աչքըն ծով ի ծով ծիծաղախիտ ծաւալանայր յառաւօտուն՝
երկու փայլակնաձեւ արեգական նման.
շողն ի ժըմին իջեալ յառաւօտէ լոյս:

Չքնաղ կնոջ այտերը նռնենու ծաղիկներ էին, որոնցից, բուսահյութի նման

կարկաչելով, սեր էր հոսում սրտի մեջ: Ողորկ ձեռքերը կանթում էր կոնքերին կամարաձև: Ոլորուն-գալարուն, ախորժալուր շրշյուններ արձակող քղանցքը ալիքվում էր՝ ծալքերն իրար վրա բերելով: Շարժվում էր հանդարտ, վայելչորեն ճեմում էր: Բերանը երկթերթ էր, վարդ էր շրթունքներից կաթում: Երբ շարժվում էր լեզուն՝ տավղի քաղցր հնչյուններ էր արձակում: Ծամերի բացվածքի մեջ հազրեվարդ կար: Սուրբ Հոգով լցված գինեգույն գեղեցկություն ունեին մազերը, որոնք փնջված էին զարդերով և այտերի շուրջը ոլորված էին երեք հյուսքերով: Ծոցը լուսափայլ էր, կարմիր վարդով լցված, դաստակները՝ ծիրանի, մանուշակի փունջ: Աստվածային հրով լցված բուրվառ էր նա՝ կնդրուկի, խունկի բույրեր արձակող: Քաղցրանվագ էր նրանից հնչող ձայնը: Զարդարված էր գեղեցիկ պատմուճանով, որ ոսկեշողում էր կապույտ, ծիրանի, բեհեզի, որդանի գույներով: Գոտին արծաթափայլ էր, ոսկեծայր, կամարաձև՝ շափյուղա քարերի մանրամասն դրվագմամբ շառագունած,

«Անձինն ի շարժել մարգարտափայլ գեղով,
ոտիցն ի գնալ՝ շողն ի կաթիլ առնոյր:

(Երբ շարժում էր մարմինը մարգարտափայլ գեղեցկությամբ, երբ քայլում էր՝ լույս էր ոտքերից կաթում**):**

Այս պատկերը մեր քնարերգության ամենափայլուն գյուտերից է: Առհասարակ, այս տաղն ամբողջությամբ հայ և համաշխարհային քերթության աննախադեպ հրաշալիքներից է:

Տաղի վերջում թեև հեղինակը հիշեցնում է, որ խոսքը երկնային Թագավորին և աշխարհի Փրկչին ծնած Մարիամ Աստվածածնի մասին է, այդուհանդերձ, այս ստեղծագործությունն ընկալվում է իբրև երկրային գեղեցիկ կնոջ գովերգություն: Դա միջնադարյան գրականության մեջ նշանակալից առաջընթաց էր դեպի մարդու գովերգը:

Կնոջ գեղեցկության պատկերումից ընդամենը մեկ քայլ էր մնում մինչև սիրո զգացմունքի պատկերումը: Նարեկացին կատարել է նաև այդ քայլը, երգել է սերը, սակայն՝ դարձյալ այլաբանորեն, որպես հոգևոր սեր, որը ծաղկում է մարդու և բնության մեջ: Աստված Ինքը համարվել է Սեր: Կենսատու սիրով է համակված նաև չքնաղագեղ կնոջ կերպարանքով պատկերվող Աստվածածինը:

Մի տաղում բանաստեղծը պատկերում է, թե ինչպես Հայր Աստված իր սերն անձրևի նման ցողում է աշխարհի և Կույս Մարիամի վրա: Այդպես, երկնքից ցողված Հայր Աստծո սիրուց ծնվում է Սեր-Աստված Քրիստոսը, որը սեր է

բերում մարդկությանը: Տաղի մեջ կան այսպիսի տողեր.

Ի սիրոյ սէր ծանուցեալ,
սիրաբողբոջ փարփմամբ լըցեալ,
սիրով ընդ սէր միաբանեալ:

(Սիրով է սերը ճանաչվում, սիրուց բողբոջած զգացմունքով լցվում, սիրով է սերը միաբանվում):

Նարեկացու «Հարության տաղ»-ում արդեն մարդը հանդես է բերված իրական աշխարհում, բնության մեջ: Տաղում պատկերված է Մասիսի աջ կողմում տեղադրված ու բեռնավորված մի սայլիկ: Նրա մեջ կա ոսկե աթոռ, վրան՝ ծիրանի բեհեզ, աթոռին բազմել է արքայի որդին: Վերջինիս կողքերին հրեշտակներ են, առջևում՝ գեղեցիկ մանուկներ, որոնք երգում են՝ գրկած Սաղմոսարան և քնար, ձեռքներին՝ խաչեր:

Սայլիկի վրա բարձել են հարյուր խուրձ խոլորձ, վեց խուրձ կորնգան, դիզված խրձերի վրա՝ մի մանուշակ:

Թեև եզները սաթի նման սև են ու սպիտակ, ծաղկանշան, արագաքայլ, քաջընթաց, թեև նրանց եղջյուրները խաչանման են, մազերը՝ մարգարիտի բույլեր, թեև սամիներն արծաթյա են, լուծը՝ ոսկի, սամիների կապերը մետաքսյա են, փոկերը հյուսված են կերպասից, և խարազանը փնջված ծաղիկ է, միևնույն է՝ չի շարժվում սայլիկը, չեն պտտվում անիվները:

Եվ, ահա, ճորտ սայլապանը, որ խոշորակազմ է ու ճարպիկ, մեջքը՝ ոստի նման բարակ, հաստաբազուկ է, լայնաթիկունք, խարտիշագեղ, ահեղագոչ, ձայն է տալիս եզներին, որոնք առույգանում են: Եվ, ահա, շարժվում է սայլիկը, պտտվում են անիվները: Թափ են առնում չորս կրծքերը սայլի, և այժմ նա անուշահոտ բուրմունք արձակելով՝ ընթանում է...

Այս ամենը դարձյալ ունի այլաբանական իմաստ. աթոռին բազմած արքա-յորդին Աստվածորդին է, իսկ խարտիշագեղ ճորտը, իր իսկ՝ բանաստեղծի բացատրությամբ՝ Քրիստոսին մկրտած Հովհաննեսն է՝ սուրբ Կարապետը: Խորհրդանշական են նաև սայլիկը, խոլորձը, կորնգանը, մանուշակը, սայլի չորս կրծքերը:

Այս այլաբանություններով հանդերձ՝ մեր առջև դարձյալ կենդանի բնությունն է և մարդը՝ որպես բնության շարժիչ ու տեր:

Տաղում Նարեկացին Հովհաննես Մկրտչին հանդես է բերել ոչ թե իբրև սրբի, ինչպիսին վերջինս պատկերված է շարականներում, այլ իբրև իրական

մարդու՝ առնական հատկանիշներով: Եվ եթե Աստվածածնին նվիրված տաղում բանաստեղծը կերտել է մի չքնաղ կանացիական պատկեր, ապա Հովհաննես Մկրտչին հանդես է բերել իբրև տոկուն ու քաջարի այր մարդու՝ կատարելով ևս մի այլաբանական մարդերգություն:

Հարության տաղը նաև հայերգության ինքնատիպ նմուշ է: Խորհրդանշական սայլիկն իջնում է ոչ թե աստվածաշնչյան Սինա սարից, այլ Մասիս լեռից («ի լեռնէն ի Մասեաց»): Սրանով Նարեկացին արտահայտել է նաև իր հայրենիքի հարության իղձը:

Հետաքրքիր է նաև, որ Արքայորդուն կրող սայլի վրա բարձված բույսերը քաղված են Հայոց դաշտերից: Գործի է դրված նաև ժամանակի հայ գեղջկական բառապաշարը: Եվ, վերջապես, սուրբ Կարապետը տաղում պատկերված է նաև հայ դյուցազունների, հատկապես «գեղապատշաճ» եւ «հաստաբազուկ» Հայկ նահապետի նմանությամբ:

Իր տաղերով Գրիգոր Նարեկացին կատարելության է հասցրել Ոսկեդարի օրհներգությունից բխող Աստծո և Աստվածածնի գովերգը՝ որպես լուսերգություն: Նա պատկերել է երկնային լույսով, սիրով ու կյանքով համակված բնությունը և մարդուն՝ որպես աստվածայինի ոգեղեն արտացոլանք: Այդպիսով նա սկզբնավորել է բնության ու մարդու գովերգը՝ հոգևոր այլաբանությամբ:

ՏԱՂԵՐԻ ԱՐՎԵՍՏԸ

Գրիգոր Նարեկացու տաղերը հանճարեղ բանաստեղծի արվեստի կնիքը կրող բարձրարվեստ ստեղծագործություններ են:

Պարսիկ և արաբ բանաստեղծներից շատ առաջ հայ քնարերգուն կատարելապես մշակել է բանաստեղծական ձևերը: Նա կազմել է բազում բարդ բառեր, որոնք գործածել է իբրև տպավորիչ մակդիրներ ու փոխաբերություններ, ինչպես՝ բողբոջախիտ, խիտասաղարթ, պտղինավետ, փայլակնաձև, ծիծաղախիտ, բուրազվարթ, ծաղկախայտուցք և այլն: Այդ բարդ բառերի շնորհիվ նա կերտել է սեղմ, ինքնատիպ ու շլացուցիչ պատկերներ: Բարձրաոճ գրաբարյան դարձվածների կողքին նա կիրառել է նաև ժողովրդական բառաձևեր, այսինքն՝ ազատորեն օգտվել է թե՛ գրական և թե՛ բանահյուսական արվեստի գանձարանից, և ինքն էլ լիուլի հարստացրել է այն:

Բանաստեղծության ասպարեզում Գրիգոր Նարեկացին դրսևորել է մեծ գեղանկարչի ունակություններ: Նա խոսքարվեստի հնարանքներով գծագրել է պատկերվող նյութը և այն գունազարդել վառ ու շքեղ երանգներով: Ահա թե

ինչու նրա պատկերած Աստվածածինը համեմատվել է նրանից հարյուրամյակներ հետո հանդես եկած եվրոպական Վերածննդի դարաշրջանի իտալացի մեծ նկարիչների վրձնած Մադոննաների հետ:

Նարեկացին տաղերում դրսևորել է նաև մեծ երաժիշտի ունակություններ: Նա հանգգիտության՝ բաղաձայնույթների և առձայնույթների վարպետ է: Հեթանոսական երգերում սաղմնավորված և միջնադարյան օրհներգուների ու ճարտասանների գործադրած հանգգիտության տարբեր ձևերը մեծ բանաստեղծը հասցրել է կատարելության:

Հնչյունների ներդաշնակ կրկնությունները մի կողմից պատկերները դարձնում են ավելի տեսանելի ու բնական, մյուս կողմից՝ տաղերին հաղորդում են երաժշտականություն ու ներքին ռիթմ: Այդպիսի դեր են կատարում **ծ** և **վ** հնչյունների կրկնությունները «Աչքն ծով ի ծով ծիծաղախիտ ծաւալանայր յառաւօտուն» մեզ ծանոթ տողում: Հիշենք նաև Վարդավառի տաղից բաղաձայնույթի մեկ այլ գեղեցիկ օրինակ՝ «Շուշանըն շաղով լըցեալ, շող շաղով եւ շար մարգարտով», նաև Հարության տաղի հետևյալ տողերը, որտեղ հնչյունագրված է լեռան լանջից գլոր-գլոր իջնող սայլիկի պատկերը. «Ի գիլ գայր, ի գիլ, սայլիկն ի գիլ, սայլիկն ի գիլ գայր, ի գիլ»:

Նարեկացու տաղերը հնչում են իբրև ճոխ ու ներքին մեղեդայնությամբ հնչող բանաստեղծություններ: Դրանք թե՛ բովանդակությամբ և թե՛ արվեստով մեծապես նպաստել են հայ աշխարհիկ բանաստեղծության ծնունդին:

«ՄԱՏՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ»

Գրիգոր Նարեկացու առավել հասուն մտքի և ստեղծագործական ավյունի արգասիք է «Մատյան ողբերգության» բանքը (հայտնի է նաև Նարեկ անունով): Բանաստեղծն այն ավարտել է մահից մեկ տարի առաջ՝ 1002 թվականին:

Սա իր նախօրինակը չունեցող ստեղծագործություն է ինչպես հայ, այնպես էլ համաշխարհային գրականության մեջ:

Բաղկացած է 95 բան-գլուխներից, որոնք բանաստեղծական աղոթքներ են, ուստի այս երկը կոչվում է նաև Աղօթքների գիրք: Գլուխներն ունեն նույն վերնագիրը. «Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ» («Սրտի խորքերից խոսք Աստծո հետ»): Եվ, իրոք, ամբողջ երկը (10 000 տողից ավելի) բանաստեղծի սրտի խոսքն է, հուզառատ բանաստեղծությունների վերածված աղոթքներ՝ ուղղված երկնային Տիրոջը:

Իսկ ինչո՞ւ է հեղինակն իր երկը համարել ողբերգություն, ողբ: Ինչո՞ւ է ողբում նա:

Նշեցինք, որ Նարեկացին միստիկ է, որը ձգտում է հասնել և միավորվել աստվածային էությանը: Նշեցինք նաև, որ, միստիկական մտածողության համաձայն, Աստված ամենուրեք է՝ բնության թե մարդու մեջ: Բայց մարդն անկատար է: Նրա հոգին թաթախված է մեղքերի մեջ, աղտոտված է երկրային կյանքի արատներով, մարմնի ցանկություններով: Ուստի աստվածային էությանը հասնելու համար մարդը պիտի անդադար մաքրի իր հոգին՝ աղոթքների, պահքի, ճգնակեցության միջոցով, հրաժարվի մարմնի ցանկություններից, մեղքերից: Հնարավո՞ր է դա: Չէ՞ որ մարմնի ցանկությունները շատ զորավոր են: Հոգին մարդուն մղում է վեր՝ դեպի անարատ երկինք, իսկ մարմինը քաշում է ցած՝ դեպի երկրային կյանքի ճահիճը:

Հոգու և մարմնի այս անհաշտ հակառակությունը միջնադարյան գրականության կենտրոնական խնդիրներից էր: Այդ հակառակությունից սաստիկ ալեկոծվել է ժամանակի հավատացյալ մարդու ներաշխարհը: Այդ ալեկոծումն իր գագաթնակետին է հասել Գրիգոր Նարեկացու հախուռն ներաշխարհում՝ վերածվելով մեծագույն տառապանքի, իսկ տառապանքը՝ մեծագույն բանաստեղծության:

«Ես եմ բոլորը, և բոլոր մարդկանց մեղքերն են իմ մեջ»,- հայտարարում է Նարեկացին: Հետևաբար, նա ողբում և աղոթում է ոչ թե իբրև առանձին անձ, այլ խտացնում է իր մեջ ողջ մեղսագործ մարդկությունը՝ առանց տարիքային, դասային ու ազգային խտրության: Այս է պատճառը նաև, որ նրա ողբն ունի համամարդկային հնչեղություն: Այն, միաժամանակ, ունի նաև մարդասիրական խոր բովանդակություն, քանի որ բանաստեղծի նպատակն է եղել մաքրել, կատարելագործել ողջ մարդկությունը: Եվ քանի որ մաքրվելու համար անհրաժեշտ է խոստովանել մեղքերը, բանաստեղծը թվարկում և մերժում է մարդկային բոլոր արատները: Այդպիսով նա բացահայտում է իրական կյանքն իր բոլոր արհավիրքներով...

Եթե Մովսես Խորենացին ողբում էր ազգային պետականության վերացման պատճառով արատավորված իր ժողովրդին, ապա Նարեկացին ողբում է մեղքերով արատավորված ողջ մարդկությանը: Այդ մեղքերը բանաստեղծը ներկայացնում է նաև իբրև խոստովանություն, հարցումներով ու պարսավանքներով դիմում է իր անձին՝ մեղա գալով ու սաստիկ փոթորկվելով: Այդ անհամար ու ծանր մեղքերի գիտակցումը ջլատում է նրա հոգին: Նա զգում է իր՝ մարդու անկատարությունը, ինչն ավելի լավ է երևում կատարյալ Աստծո հետ համեմատվելիս: Բանաստեղծը տարբեր հնարքներով, զմայլված և երբեմն ասես նախանձով պատկերում ու գովերգում է Աստծո անհասանելի մեծությունը:

Անկատար մարդը խնդրում, աղերսում, աղաչում է կատարյալ Տիրոջը՝ լինել գթառատ, կարեկցել, օգնել ու բարձրացնել մարդուն, զորացնել նրան...

Սրտառուչ ու ողբագին աղերսանքների շարքին միահյուսվում են բանաստեղծի հոգեկան ապրումները, տագնապները, տարակուսանքները, հուսալքությունն ու հոգեկան ցավերը, գալարումներն ու ջղաձգումները:

Նարեկացու տարակուսանքի մեջ արդեն ցոլարձակում է հույսի լույսը: Նա հավատում է, որ Աստված բարեգութ կլինի մարդու հանդեպ, քանի որ սիրում է մարդուն: Հավատում է նաև մարդու ներքին ուժին, որով նա կկարողանա մաքրագործվել: Քանի որ մարդը «եզակի պատկերն է Աստծո», նախապես, մինչև մեղքերի մեջ թաղվելը, եղել է աստվածանման, ստեղծարար ու մաքուր:

Մեղսալի մարդուն անխնա պարսավելուց հետո բանաստեղծը գովաբանում է մարդ արարածին: Կարդանք հատվածներ այդ գովաբանությունից՝ Պարույր Սևակի աշխարհաբար փոխադրությամբ.

Ահա՛ մարմինդ կրող ու տանող
երկու միակից ու խորհրդակից ոտքերիդ վրա
դու կառուցվեցիր հրեշտակածև,
որ կրկնակարկառ քո բազուկներով՝
իբրև թռիչքի երկու թևերով վերաբարձրատար,
քո հայրենական աշխարհը դիտես...

Եվ աշտանակի վրա քո մարմնի,
իբրև ճրագի մի բազմականթեղ,
հաստատվեց գլխիդ կլորությունը,
որ դու այդպիսով, չօտարանալով
լույսի շնորհից նախաօրինակ,
տեսնես Աստծո՛ւն և մնայո՛ւնը իմաստասիրես...

Հրեշտակապատկեր և բանականությամբ զարդարված մարդը՝ Աստծո նմանությամբ, որպես արարող, ստեղծագործ էակ, նույնիսկ աստված է կոչվել: Միստիկ բանաստեղծը խիզախում է նաև առաջ քաշել Աստծո շնորհիվ և նրան միանալով՝ մարդու աստվածացման գաղափարը: Այսինքն՝ մարդը մաքրագործվելով ու կատարելագործվելով՝ պիտի վերադառնա իր նախասկզբնական անարատ ու լուսեղեն վիճակին: Այս գաղափարից սարսափել է միջնադարյան մեծ մտածողի հոգին.

Եվ այն, ինչ ասելն իսկ ահավոր է,
գրում եմ այստեղ ես՝ ի հիշատակ մեծ երախտիքիդ.
կարող ենք լինել մենք ասված նույնիսկ՝
շնորհներով ընտիր և Ստեղծողիդ հետ միանալ...

Ըստ Գրիգոր Նարեկացու՝ մարդը միանալով աստվածային էությանը, չի կորցնելու իր մարդկային ինքնությունը, այլ Աստծո հետ հավասար, անճառելի լույսի մեջ ունենալու է անվախճան փառք, մարդն՝ Աստծո՛ մեջ, և Աստված՝ մարդո՛ւ մեջ:

Մարդուն տեսնել աստվածացած, այսինքն՝ կատարյալ, անարատ, անթերի և ազատ: Սա «Մատյան ողբերգության» երկի գաղափարական կիզակետն է, մարդու աննախօրինակ փառաբանություն, մարդերգության աննախադեպ օրինակ հայ և համաշխարհային բանաստեղծության մեջ:

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

Գրիգոր Նարեկացին ընդհանուր գաղափարի շուրջ կառուցել է մի համաչափ ու ամբողջական երկ: Այն չունի որոշակի սյուժե: Հեղինակն իր երկը ստեղծել է իբրև բանաստեղծական բանք-աղոթքների մի հավաքածու, որպեսզի դրանով բովանդակ մարդկության աղաչանքները մատուցվեն Աստծուն:

Եթե տաղերում բանաստեղծը հանդես է գալիս իբրև ճարտար գեղանկարիչ ու երաժիշտ, ապա Նարեկը կերտելիս նա ամենից ավելի դրսևորել է հմուտ ճարտարապետի հատկանիշներ: Այդ կոթողային գործը Նարեկացին, ֆրանսիացի հայագետներից մեկի բնորոշմամբ, կառուցել է միջնադարյան հայկական եկեղեցու նմանողությամբ:

Չնայած իր վիթխարի ծավալին, այս երկը հղկված է, ավելորդություններից զերծ: Իր հախուռն հույզերը, խոհերը, ապրումներն արտահայտելու համար բանաստեղծը կուտակել է հոմանիշ բառեր, մակդիրներ, փոխաբերություններ, համեմատություններ, կիրառել պատկերավորման ու արտահայտչական գրեթե բոլոր միջոցները: Եվ այսքանից հետո՝ ոչ մի ավելորդ բառ, ոչ մի անտեղի ու անճաշակ պատկեր: Ամեն ինչ իր տեղն է դրված և կատարում է իր դերը...

Վանա լճի եզերքին ապրած մենակյաց բանաստեղծն ասես այդ նվիրական լճի շունչն ու ծփանքն է հնչյունների ու բառերի փոխած՝ տեղադրել մագաղաթի վրա: Այստեղ էլ, ինչպես տաղերում, նա դրսևորել է բնության խոր զգացողություն՝ համեմատության եզր ընդունելով բազում բնապատկերներ:

Նարեկացին դիմել է հատկապես զուգահեռականության և հակադրության հնարանքներին՝ ձգտելով ցույց տալ ինչպես մարդու և Աստծո տարբերությունը, այնպես էլ իր հոգու երկատված վիճակը, ինչպես.

Երկու ըմպանակ ունի ձեռքերում.
մեկն՝ արյունով լի, մյուսը՝ կաթով.
երկու բուրվառներ կայծակնացնցուղ.
մեկը՝ խնկաբույր, մեկը՝ ճենճահոտ...

Մեկ այլ տեղ դիմելով չափազանցության հնարանքին, բանաստեղծը ձգտել է ցույց տալ իր՝ մարդու մեղքերի ահագնությունը՝ ստեղծելով մի վիթխարի պատկեր... Նման դեպքերում նա դիմել է ժողովրդական բանարվեստին: Իսկ երկի դրվագներից մեկը, ժողովրդական ողբական երգերի հետևությամբ, հորինել է հանգավոր: Մինչդեռ ամբողջ երկը գրված է առանց հանգերի, ազատ և խառը ոտանավորով, որտեղ իշխում են հնգավանկ անդամները: Այդ չափը լիովին համապատասխանում է երկի բովանդակությանը, բուռն ապրումների ու խոհերի անկաշկանդ հոսքին:

Այս կատարյալ ստեղծագործությունը, համամարդկային վեհաշունչ աղոթքը չտեսնված հրաշալիք է երևացել մարդկանց աչքին: Եվ ինչպես հեղինակին, այս երկն էլ ժողովուրդը սրբացրել է, վերագրել նրան հրաշագործ հատկություններ և օգտագործել հիվանդներին բժշկելու համար:

Նարեկացին ինքը զգացել է իր Մատյանի անսահման մեծությունն ու արժեքը՝ ասելով.

Ու թեև որպես մի մահկանացու պիտի վախճանվեմ,
բայց այս Մատյանի հարակայությամբ կմնամ անմահ:

Եվ, իսկապես, մեծ բանաստեղծն ստեղծել է մի անմահ հուշարձան՝ մինչև այժմ գործող հրաշակերտ եկեղեցի, մի անլռելի զանգակատուն...

Գրիգոր Նարեկացին ապրել ու ստեղծագործել է Հայոց պետականության համեմատաբար խաղաղ ու նպաստավոր պայմաններում: Ուստի և հայ միտքը եզակի հնարավորություն է ունեցել բարձրանալ ազգային ցավերից ու խնդիրներից և շոշափել համամարդկային հարցեր: Այդուհանդերձ, Գրիգոր Նարեկացին ազգային իրականության ու գրականության ծնունդ է: Նա կրում է հայոց լեզվի և հայ գեղարվեստական մտքի ամբողջ ճոխությունը, հայ ժողովրդի

բնավորության, մտածողության, հոգու և ոգու բոլոր բարձր հատկանիշները:

Գրիգոր Նարեկացին հայ բանաստեղծությունը բարձրացրել է մի աննախ-օրինակ մակարդակի և կանխորոշել հայ գրականության զարգացման ուղիները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՆԱՐԵԿԱՑՈՒՑ ՀԵՏՈ

Միջնադարի հայ հանճարի մահից հետո Հայաստանն ապրել է քաղաքական խոր ճգնաժամ: Հատկապես սելջուկ թուրքերի կործանարար արշավանքներից սկսեց խաթարվել և վերացավ Բագրատունյաց պետությունը (1045): Հայաստանը ենթարկվեց բյուզանդական և թուրքական արյունալից ասպատակություններին: Դրանց հետևանքով ընդհատվեց և այդպես էլ չկայացավ նախորդ ժամանակա-շրջանում սաղմնավորված հայկական Վերածնունդը, որի ամենամեծ ազդակն էր Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունը:

Իր անկախության համար մշտապես պայքարող հայ ժողովուրդն իր պետականությունը վերականգնեց Հայոց լեռնաշխարհից դուրս՝ Կիլիկիայում: 1080 թվականին ստեղծվեց Կիլիկիայի հայկական մեծ իշխանապետությունը, ապա թագավորությունը (1198):

Բուն Հայաստանում ևս, Բագրատունյաց կենտրոնական թագավորության անկումից հետո, ստեղծվեց Զաքարյան իշխանապետությունը: Միաժամանակ, որպես հայկական պետական կազմավորումներ, կային նաև Սյունիքի թագա-վորությունն ու Արցախի իշխանությունը:

Այսպիսով՝ տվյալ ժամանակաշրջանում ինչպես Կիլիկիայում, այնպես էլ բուն Հայաստանում շարունակեց ծավալվել հայ մշակույթը, որ գնալով ավելի ու ավելի աշխարհիկացավ:

Ժամանակի գեղարվեստական արձակը դրսևորվեց ինչպես պատմագրության, այնպես էլ առակագրության միջոցով: Կյանքի աշխարհիկացման շնորհիվ հայ իրականության մեջ լայն տարածում գտան ժողովրդագուսանական հայրենները:

Նարեկացու հիմնած գրական ժանրերով գրվեցին բազում արժեքավոր ստեղծագործություններ: Ի հայտ եկան անհատական և ընդհանրական Գան-ձարաններ և Տաղարաններ: Մեծ բանաստեղծի որոշակի ազդեցությամբ ստեղծվեցին նոր շարականներ: Հիշարժան են Անիի շարականագրության դպրոցի հիմնադիր Պետրոս Գետադարձի և Կիլիկիայի շարականագրության սկզբնավորողի՝ Գրիգոր Պահլավունու հոգևոր երգերը:

Նարեկացու անմիջական և արժանավոր հաջորդներից են նշանավոր պետական-ռազմական գործիչ Գրիգոր Մագիստրոսը և իմաստասեր Հովհաննես

Սարկավագը:

Գրիգոր Մագիստրոսը մեր առաջին հմուտ տաղաչափն է, որը տաղաչափության կիրառումն ընդունել է որպես սկզբունք ու բանաստեղծական ծրագիր: Նրա ժառանգության մեջ ամենից ավելի հայտնի է «Հազարտողյան» կոչված բանքը, որտեղ չափաբերված են Աստվածաշնչի կարևոր դրվագները: Այս գործը, որպես ամբողջապես չափածո և հանգավոր բանք, առաջինն է մեր բանաստեղծության մեջ: Մագիստրոսը հեղինակել է նաև արձակ և չափածո թղթեր (նամակներ):

Ղևոնդյանց և Վարդանանց հերոսներին ձոնված շարականներ է հեղինակել Հովհաննես Սարկավագը՝ արտահայտելով անկախությունից զրկված և աշխարհով մեկ ցրված ժողովրդին մայր հայրենիքում ժողովելու գաղափարը: Մեր այս բանաստեղծը ստեղծել է նաև հայ միջնադարյան և, առհասարակ, համաքրիստոնեական գրականության մեջ առաջին տեսական-գեղագիտական չափածո երկը՝ «Բան իմաստության», որ շոշափում է արվեստի ծագման և արվեստի ու բնության հարաբերության խնդիրներ: Նա առաջ է քաշել այն գաղափարը, թե՝ արվեստի արտացոլման առարկան պիտի լինի բնությունը՝ իրականությունը: Սարկավագյան տեսությունը մեծապես նպաստել է գրականության և արվեստի աշխարհիկացման խորացմանը:

Գրիգոր Նարեկացու ամենախոշոր և արժանավոր հետևորդն էր Ներսես Շնորհալին:

ՄԵԾԵՐԸ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նախնի մատենագիրը (Նարեկացին) գիտեր ծովածայն հնչեցնել բառերը, գիտեր ծիծաղախիտ ժպտեցնել բառերը. «Աչքն ծով ի ծիծաղախիտ ծավալանայր...»:

Միսաք Մեծարենց

«Մատյանը» մի սքանչելի կոթող է՝ բարձրացված Նարեկի վանքի մեծ տեսանողի կողմից: Այն անժամանց, բոլոր հետագա ժամանակներին հասցեագրված մի ստեղծագործություն է:

Վահե Գոդել

«Մատյան ողբերգությունը» հրաբխի ժայթքում է... Ասես ընկնում ես հրաշեկ լավայի հեղեղի մեջ, որ թավալվում է քարեղեն լանջով: Նա քեզ տանում է, պտտում, շպրտում դեն, և քեզ մնում է ենթարկվել նրա հոսանքին, որ մինչև վերջ չմոխրացնի քեզ:

Վլ. Ռոզով

Նարեկացու այդ վիթխարի ստեղծագործության՝ «Մատյան ողբերգության» պոեմի գլուխները թարգմանության մեջ անգամ հզոր են հնչում, այնպիսի ուժով ու այնքան լուրջ, որ ակամա սկսում ես համեմատել Բախի հետ, հիշում նրա ստեղծագործությունների կատարումը փառահեղ տաճարներում:

Կայսին Կուլիև

Հարցեր և առաջադրանքներ

1. Պատմական ինչ ժամանակաշրջանում է գրական ասպարեզ իջել Գրիգոր Նարեկացին:
2. Ինչ է նշանակում միստիկ բանաստեղծ:
3. Ո՞րն էր Նարեկացու տաղերի այլաբանությունը:
4. Գեղարվեստական ինչպիսի՞ արժեքներով են օժտված բանաստեղծի տաղերը:
5. Ինչ կառուցվածք և առանձնահատկություններ ունի «Մատյան ողբերգության» պոեմը:
6. Կազմե՛ք գրողի գրական դիմանկարը՝ ըստ կենսագրական տեղեկությունների և ժամանակակիցների հուշերի:
7. Վերաշարադրե՛ք «Տաղ Հայտնության» բանաստեղծության բովանդակությունը՝ մեկնաբանելով:
8. Դո՛ւրս գրեք «Տաղ Հայտնության» ստեղծագործության պատկերավորման միջոցները՝ նշելով տեսակը:
9. Ստեղծի՛ր «Մեղեդի ծննդյան» տաղի քնարական հերոսի բնավորությունն ու արտաքին հատկանիշներն արտահայտող նկարագրություններ (անհատական աշխատանք):
10. Ներկայացրո՛ւ բանաստեղծի անձնական ապրումներն ու բնության պատկերների զուգակցումը բանաստեղծության մեջ (անհատական աշխատանք):
11. Դիրքորոշում արտահայտի՛ր, դրսևորի՛ր սեր և հարգանք հեղինակի ապրումի և հույզի, ցավի վերաբերյալ (անհատական աշխատանք):

12. Տաղից դուրս գրեք հեղինակի կիրառած գեղարվեստական հնարները ու միջոցները՝ նշելով տեսակները:
13. Գտեք բանաստեղծության յուրաքանչյուր տան բանալի բառը և վերնագրեք բովանդակությանը համապատասխան: Յուրաքանչյուր տան արտահայտած իմաստն արտահայտիր մեկ ամփոփ նախադասությամբ:

Տունը	Բանալի բառը	Գաղափարը

14. Վերաշարադրեք «Մեղեդի ծննդյան» տաղի բովանդակությունը՝ մեկնաբանելով:
15. Հիմնավորիր՝ ինչու է Նարեկացին պոեմը վերնագրել «Մատյան ողբերգության»: Սա պատահակա՞ն է արդյոք, թե՞ մտացածին (անհատական աշխատանք):
16. Կարդա՛ «Մատյան ողբերգության» պոեմը և դատողություններ արա պոեմի վերաբերյալ (անհատական աշխատանք):
17. Պոեմից դուրս գրիր քնարական հերոսի ողբերգական վիճակը նկարագրող բառակապակցությունները:
18. Վերարտադրեք «Մատյան ողբերգության» պոեմի գործողությունների գարգացման ընթացքը և նշեք թեման, զուգահեռներ անցկացրեք մեր ապրած օրերի հետ, գտեք ընդհանրություններ և տարբերություններ:
19. Ինչ զգացողություններ է առաջացնում «Մատյան ողբերգության» պոեմը քո մեջ (անհատական աշխատանք):

1. Ի՞նչ էիք տեսնում պոեմը կարդալիս. **զգայություններ՝** • տեսողական • լսողական • զգացողական	**2. Ի՞նչ էիք զգում պոեմը կարդալիս.** **վերաբերմունք** • հույզեր • զգացմունքներ
3. Կապը քո և իրական կյանքի հետ. • ասոցիացիաներ • առնչություններ • օրինակներ	**4. Նոր վերնագիր.** • ընդհանրացում • վերաիմաստավորում • գնահատում

20. Բացատրե՛ք, թե ինչպես է արտահայտվել մարդու բարոյական վերածնության՝ բանաստեղծի հույսն ու հավատը «Մատյան ողբերգության» պոեմի 95-րդ գլխում:
21. Մեկնաբանե՛ք «Մատյանի» քնարական հերոսի մարդկային ապրումներն ու հույզերը՝ ներկայացնելով քառաբաժանով:
22. Գնահատե՛ք «Մատյան ողբերգության» պոեմի գեղարվեստական արժեքը:
23. Բնագրից գտե՛ք պատկերավորման և արտահայտչական միջոցները, դո՛ւրս գրեք և բացատրե՛ք դրանց գործածության նպատակը: